№ 196 Նոյեմբերի 6 (18) 1880 Նոյեմբերի 6 (18) № 196

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՊՐԻԿԱԶԸ ՄԵԾ

Թոյլատուութեամբ 1880 թուականի Նոյեմբերի 1-ից տալիս է հետևեալ %:

1) Անժամանակ մուտքերին այսինքն մինչև պահանջելը. 4%
2) Մէկ, երկու և երեք տարով 4½%
3) Չորս և հինգ տարով 5%
4) Վեցից մինչև տասերկու տարով 5½%
5) Տասերկու տարուց աւելի 6%

Պրիկազը ընդունում է մուտքեր Ռուսաստանի բոլոր տեղերից, վարչական հիմնարկութիւններից, պաշտօնեաներից և մասնաւոր անձինքներից, վանքերից, եկեղեցիներից, քաղաքային և գիւղական հասարակութիւններից: Մուտքերը ընդունվում են նոյնպէս և փոստայով ուղարկված մի յայտարարութեան հետ հասարակ թղթի վրա: Անժամանակ մուտքերը մասնաւոր անձինքներից ընդունվում են 50 ր. ոչ պակաս, իսկ կառավարութիւնից 30 ր. ոչ պակաս իւրաքանչիւր անգամ: Ժամանակաւոր մուտքերը այլապէս չեն ընդունվում, եթէ ոչ գումարատիրոջ, կամ մուտքը յանձնողի անունով, իսկ անժամանակ մուտքերը կարող են լինել կամ անանուն, կամ մոցնողի անունով: Մուտքերը ցանկացողներին նոյն օրը կը վերադարձնվեն: Աւելի մանրամասն պայմանները մուտքերը ընդունելու և վերադարձնելու մասին յայտնված են 941 յօդ. XIII բաժնի հրատարակութիւն 1857 թ. և 1863 թ. կանոնադրութեան Կովկասեան Պրիկազի:

2—3

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳԴԻՒՑ

25 հոկտեմբերի

Մեր լրագրութեան մէջ եթէ ո՛չ ամենևին, գոնէ շատ քիչ են պատահում յօդուածներ առհասարակ մշակների դրութեան առթիւ: Միայն անցեալ տարի և, եթէ չեմ սխալվում, այս տարվայ սկզբում „Մշակի“ էջերում երևեցան մի քանի յօդուածներ Մոսկվայից գրված, որոնց հեղինակը, պ. Ն. Աբելեանցը, հասարակութեան ուշադրութիւնը դարձնելով Կովկասի մշակ դասի անանխանձելի դրութեան վրա, առաջարկել էր մինչև անգամ հիմնել Կովկասի զանազան քաղաքներում այնպիսի ընկերութիւններ, որոնց նպատակը լինէր մշակների գոնէ անտեսական դրութեան բարւոքումն: Բայց, դժբաղդաբար այդ կարևոր առաջարկութիւնը մնաց ինչպէս ասում են „ձայն բարբառոյ յանապատի“, նա՛ արձագանք չը գտաւ ո՛չ հասարակութեան և ո՛չ էլ պէտք է խոստովանած, հայ լրագրութեան կողմից: Իսկ պ. Աբելեանցը երևի յուսահատվելով, դատապարտեց իրան լռութեան: Սակայն մի այդպիսի կարևոր հարցով զբաղվելը անհրաժեշտ է, եթէ աչքի առաջ առնենք մշակների, մանաւանդ գաւառական քաղաքներում բանող մշակների ներկայ սարսափելի վիճակը: Ձը գիտեմ գուցէ ուրիշ տեղ, ուրիշ քաղաքներում մշակ դասի կեանքը բարւոք է, բայց Բագուի մշակների կեանքը կարելի է ամենադառն և ողբալի համարել: Բագուի Ընդրկովկասի այդ, եթէ չեմ սխալվում, առաջին արդիւնաբերող քաղաքի մէջ այժմ կենտրոնացած է մեծ քանակութիւն մշակների, որոնք մեծ մասամբ բանում են նաւթային գործարաններում, իսկ փոքր մասամբ բեռնակիրներ են: Մարդ քարացած սիրտ պէտք է ունենայ որ անտարբեր մնայ տեսնելով վշտերը, տանջանքները, այն հալածանքը, որ կրում են գործարաններում բանող մշակները իրանց թշուառ գոյութիւնը շարունակելու համար: Այդ գործարաններում մշակների բանելու համար նշանակված չէ մի որոշ ժամանակ: Կան այնպիսի գործարաններ, որոնց տէրերը իրանց շահերի համար անդթութեամբ ստիպում են նրանց գործել օրը 20 ժամ, մինչդեռ եւրօպական գործարաններում մշակները բանում են օրական ոչ աւելի քան 10 ժամ և դեռ այդ էլ շատ է համարվում: Օրական քսան ժամ գործելով և ապրելով խոնաւ բնակարաններում, կերակրվելով անսանուն կերակուրներով, մշակը, մի հարկ, մի կարճ միջոցում կարող է կորցնել իր առողջութիւնը և այդ այդպէս էլ պատահում է: Նայեցէք առաջին օրը, երբ նա դա է գնում գործարանը, որքան առողջ և զուարթ է նրա դէմքը, որքան վստահ նրա քայլուածքը, բայց նայեցէք թէ նա որքան փոխվել է երկու կամ երեք ամիս գործարանում բանելուց յետոյ: Նրա երեսը իր առաջվայ զուարթութիւնը, կարմրութիւնը կորցրել է արդէն, նրա աչքերը խորն են ընկել, երեսի ոսկորները դուրս են ցցվել: Բայց նա այդ բոլորի փոխարէն ի՜նչ վարձ է ստանում գործարանատիրոջից, ոչինչ, ամենաչնչին վարձ, ամենայն maximum 16 մանէթ, իսկ minimum 10 մանէթ, այն էլ հազար տեսակ արհամարհանքների, հայհոյանքների և շատ ժամանակ թակի ու ծեծի հետ: Վա՛յ այն մշակին, որը համարձակվել է իր տիրոջ հրամանից դէթ մազի չափ շեղվել այդպիսի դէպքերում: Նա խոհեմութիւն կանի եթէ չերևայ, եթէ ոչ գործարանատիրոջ կամ նրա հաւատարիմ գործակատարի անսանձ լեզուն չի դադարի հազար ու մի անվայել ու կեղտոտ հայհոյանքներով վիրաւորել ոչ միայն նրա անձնաւորութիւնը, այլ և նրա անմեղ ընտանիքը, ծնողները և մինչև անգամ նրա մեռելներին ևս չի խնայի: Գործարանում հրդեհ է պատահում, մշակին են մեղադրում, գործարանում մէկ բան է կորչում, մշակն է գողութեան կասկածանքի տակ ընկնում, վերջապէս ամենայն մի քայլում, ամենքի յանցանքի համար մշակն է պատասխանատու, նա է ենթարկվում հալածանքի: Այդպէս են վարվում այդ անբաղդ և միանգամայն թշուառ արարածների հետ անխիղճ թէ հայ, թէ թուրք և թէ ռուս գործարանատէրերը: Հայ մշակը առաջին դէպքում կարծում է թէ նա կարող է ապահով լինել հայ գործարանատիրոջ մօտ, բայց նա չարաչար սխալված է համարում իրան, երբ տեսնում է, որ իր արիւնակիցը ևս այնպէս կոշտ, կոպիտ և անխիղճ է վարվում, ինչպէս գուցէ չէր վարվի նրա հետ այլազգին: Հոգ չէ. թո՛ղ մշակը հարստահարվի, թո՛ղ նրա թշուառ կեանքը մաշվի, միայն թէ իր տիրոջ անյատակ սնդուկը հարստութիւնով լցնելու համար գիշեր ու ցերեկ, ժամանակ ու անժամանակ գործէ: Փոյթ չէ գործարանատէրին, թէ նրա մշակները բնակվում են այնպիսի բնակարաններում, ուր միայն խոզերը կարող են բնակվել, փոյթ չէ թէ նրանք հիւանդանում են, դեղ չեն ճարում և այլն: Այդպիսի բաների համար մտածել, գլուխը ցաւացնել չը գիտէ մեր գործարանատէրը, որովհետև նա իր պարտքը կատարած է համարում ամսական մշակների երեսին մի քանի մանէթ շպրտելով, այն էլ

ՌՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զաջողվեցաւ:—Ներքին տեսութիւն: Նամակ Բագուից: Նամակ Մաղրասայից: Նամակ Եկատերինոդարից:—Արտաքին տեսութիւն: Ազգային ներքին վիճակը: Ալբանական միութիւն: Բոլգարիա:—«Մշակի» հեռագիրներ:—Յայտարարութիւններ:

ՁԱՋՈՂՎԵՑԱՒ

Թիւրքիան սխալվեց իր հաշիւների մէջ. նրան չաջողվեցաւ ունենալ իր ասիական նահանգների մօտ մի անկախ Քիւրդիստան: Ինչպէս հաղորդում են, քիւրդերը, որոնք ապստամբվեցան Պարսկաստանում, այժմ սաստիկ ջարդվում են պարսիկ զօրքերից:

Երևի Թիւրքիայի նպատակը հետևեալն էր:

Որովհետև Զէրնօզօրիայի և Յունաստանի խնդրից յետոյ վաղ թէ ուշ պէտք է յարուցվի և Հայաստանի խնդիրը, Թիւրքիան մտածեց որ լաւ է ունենալ մի անկախ, զօրեղ Քիւրդիստան, որի վայրենի բնակիչները հարկաւոր ժամանակ արշաւանքներ գործէին Հայաստանի վրա, աւելի այդ երկիրը և այդպիսով, երբ Եւրոպան կը սկսի խօսել Հայաստանի վրա, Թիւրքիան կը պատասխանի որ այլ ևս Հայաստանում հայեր չը կան: Բայց որովհետև այդ տեսակ քրդական երկիր անյարմար և Եւրոպայի աչքում կասկածաւոր կերևար կազմել նոյն իսկ ասիական Թիւրքիայի սահմանների մէջ, Ռ. Դուռը մտածեց այդ քրդական միութեան կենտրոնը կազմել իր սահմաններից դուրս, Պարսկաստանում, որտեղից բարբարոս քրդերին հեշտ կը լինի միշտ արշաւանքներ գործել Հայաստանի վրա:

Բայց բաղդաւորապէս Ռ. Դուռը սխալվեց իր հաշիւների մէջ. նա հաւատացած էր որ իր համար ատելի Պարսկաստանը այնքան թոյլ է, այնքան քիչ զօրք ունի, որ անկարող կը լինի գրաստել քրդերին:

Այժմ հակառակը պատահեց. քրդերը ոչ թէ միայն ջարդվել են, բայց և շէյխ Իբադուլլահը

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳԴԻՒՑ

25 հոկտեմբերի

Մեր լրագրութեան մէջ եթէ ո՛չ ամենևին, գոնէ շատ քիչ են պատահում յօդուածներ առհասարակ մշակների դրութեան առթիւ: Միայն անցեալ տարի և, եթէ չեմ սխալվում, այս տարվայ սկզբում „Մշակի“ էջերում երևեցան մի քանի յօդուածներ Մոսկվայից գրված, որոնց հեղինակը, պ. Ն. Աբելեանցը, հասարակութեան ուշադրութիւնը դարձնելով Կովկասի մշակ դասի անանխանձելի դրութեան վրա, առաջարկել էր մինչև անգամ հիմնել Կովկասի զանազան քաղաքներում այնպիսի ընկերութիւններ, որոնց նպատակը լինէր մշակների գոնէ անտեսական դրութեան բարւոքումն: Բայց, դժբաղդաբար այդ կարևոր առաջարկութիւնը մնաց ինչպէս ասում են „ձայն բարբառոյ յանապատի“, նա՛ արձագանք չը գտաւ ո՛չ հասարակութեան և ո՛չ էլ պէտք է խոստովանած, հայ լրագրութեան կողմից: Իսկ պ. Աբելեանցը երևի յուսահատվելով, դատապարտեց իրան լռութեան: Սակայն մի այդպիսի կարևոր հարցով զբաղվելը անհրաժեշտ է, եթէ աչքի առաջ առնենք մշակների, մանաւանդ գաւառական քաղաքներում բանող մշակների ներկայ սարսափելի վիճակը: Ձը գիտեմ գուցէ ուրիշ տեղ, ուրիշ քաղաքներում մշակ դասի կեանքը բարւոք է, բայց Բագուի մշակների կեանքը կարելի է ամենադառն և ողբալի համարել: Բագուի Ընդրկովկասի այդ, եթէ չեմ սխալվում, առաջին արդիւնաբերող քաղաքի մէջ այժմ կենտրոնացած է մեծ քանակութիւն մշակների, որոնք մեծ մասամբ բանում են նաւթային գործարաններում, իսկ փոքր մասամբ բեռնակիրներ են: Մարդ քարացած սիրտ պէտք է ունենայ որ անտարբեր մնայ տեսնելով վշտերը, տանջանքները, այն հալածանքը, որ կրում են գործարաններում բանող մշակները իրանց թշուառ գոյութիւնը շարունակելու համար: Այդ գործարաններում մշակների բանելու համար նշանակված չէ մի որոշ ժամանակ: Կան այնպիսի գործարաններ, որոնց տէրերը իրանց շահերի համար անդթութեամբ ստիպում են նրանց գործել օրը 20 ժամ, մինչդեռ եւրօպական գործարաններում մշակները բանում են օրական ոչ աւելի քան 10 ժամ և դեռ այդ էլ շատ է համարվում: Օրական քսան ժամ գործելով և ապրելով խոնաւ բնակարաններում, կերակրվելով անսանուն կերակուրներով, մշակը, մի հարկ, մի կարճ միջոցում կարող է կորցնել իր առողջութիւնը և այդ այդպէս էլ պատահում է: Նայեցէք առաջին օրը, երբ նա դա է գնում գործարանը, որքան առողջ և զուարթ է նրա դէմքը, որքան վստահ նրա քայլուածքը, բայց նայեցէք թէ նա որքան փոխվել է երկու կամ երեք ամիս գործարանում բանելուց յետոյ: Նրա երեսը իր առաջվայ զուարթութիւնը, կարմրութիւնը կորցրել է արդէն, նրա աչքերը խորն են ընկել, երեսի ոսկորները դուրս են ցցվել: Բայց նա այդ բոլորի փոխարէն ի՜նչ վարձ է ստանում գործարանատիրոջից, ոչինչ, ամենաչնչին վարձ, ամենայն maximum 16 մանէթ, իսկ minimum 10 մանէթ, այն էլ հազար տեսակ արհամարհանքների, հայհոյանքների և շատ ժամանակ թակի ու ծեծի հետ: Վա՛յ այն մշակին, որը համարձակվել է իր տիրոջ հրամանից դէթ մազի չափ շեղվել այդպիսի դէպքերում: Նա խոհեմութիւն կանի եթէ չերևայ, եթէ ոչ գործարանատիրոջ կամ նրա հաւատարիմ գործակատարի անսանձ լեզուն չի դադարի հազար ու մի անվայել ու կեղտոտ հայհոյանքներով վիրաւորել ոչ միայն նրա անձնաւորութիւնը, այլ և նրա անմեղ ընտանիքը, ծնողները և մինչև անգամ նրա մեռելներին ևս չի խնայի: Գործարանում հրդեհ է պատահում, մշակին են մեղադրում, գործարանում մէկ բան է կորչում, մշակն է գողութեան կասկածանքի տակ ընկնում, վերջապէս ամենայն մի քայլում, ամենքի յանցանքի համար մշակն է պատասխանատու, նա է ենթարկվում հալածանքի: Այդպէս են վարվում այդ անբաղդ և միանգամայն թշուառ արարածների հետ անխիղճ թէ հայ, թէ թուրք և թէ ռուս գործարանատէրերը: Հայ մշակը առաջին դէպքում կարծում է թէ նա կարող է ապահով լինել հայ գործարանատիրոջ մօտ, բայց նա չարաչար սխալված է համարում իրան, երբ տեսնում է, որ իր արիւնակիցը ևս այնպէս կոշտ, կոպիտ և անխիղճ է վարվում, ինչպէս գուցէ չէր վարվի նրա հետ այլազգին: Հոգ չէ. թո՛ղ մշակը հարստահարվի, թո՛ղ նրա թշուառ կեանքը մաշվի, միայն թէ իր տիրոջ անյատակ սնդուկը հարստութիւնով լցնելու համար գիշեր ու ցերեկ, ժամանակ ու անժամանակ գործէ: Փոյթ չէ գործարանատէրին, թէ նրա մշակները բնակվում են այնպիսի բնակարաններում, ուր միայն խոզերը կարող են բնակվել, փոյթ չէ թէ նրանք հիւանդանում են, դեղ չեն ճարում և այլն: Այդպիսի բաների համար մտածել, գլուխը ցաւացնել չը գիտէ մեր գործարանատէրը, որովհետև նա իր պարտքը կատարած է համարում ամսական մշակների երեսին մի քանի մանէթ շպրտելով, այն էլ

Հ՞ստատ չ՝ թե ոչ՝ գիտեմ միայն թե Ալեքսանդր Ալեքսանդրովիչ Ամենայնի Ռուսաց Սուրբ Սինոդի գլխավոր դատախազն է։ Ինչպես գրում է «Գոլոս»-ը, Ալեքսանդր Ալեքսանդրովիչ Ամենայնի Ռուսաց Սուրբ Սինոդի գլխավոր դատախազ նշանակելու հրամանագրի ստորագրությունը Ալեքսանդր III-ը դրել է Ղրիմում գտնվելու ժամանակ

այլն,—ուրիշ շատ այդ տեսակ ցնդաբանութիւններ: Ձեզ ինչ, «Մեղուի» պ. խմբագիր. «Մշակը» տգէտ կամ խելացի լինելը մենք լաւ գիտենք, նա մեզ բացի օգուտը մինչև այժմ վնաս տուած չէ: Ամիրխանեանցը որսում է լուսաւորչականներին հարիւր անդամ սասցիք, բաւական է. Ջող զգոյշ կենան լուսաւորչականները. եթէ հիմնաւոր հաւատ ունեն, եթէ կարող են. ծեր ինչ գործն է ամեն մարդ խելք ունի, եւ իրեն խելքով կարող է իր հոգու փրկութեան վրա մտածել, առանց ծեր եւ իմ ասելուն: Մէլիքզադէն այսպէս է, այնպէս է, այդ էլ ծեր գործը չէ. նա մեզ պաշտելի է, մենք գիտենք ով է նա, եւ ինչ արժանաւորութիւն ունեն նորա գրուածները: Դուք փոխանակ հայհոյանքներ թափելու նրա գլխին, ազնուաբար վեր առէք գրիչը, եւ եթէ շնորը ունէք, քննեցէք նրա գրուածները, կրիտիկայի ենթարկեցէք, եւ ցոյց տուէք բոլորին նրա սխալ գաղափարները, եթէ կան: Այն ժամանակ մի բանի նման կը լինի. իսկ չար ոգով անձնականութեան եւ պատի կպչել, սորա նորա ոտիցը քաշել,—դրանք ազնիւ մարդկանց գործեր չեն:

Իսկ դուք, աշխատասէր „Մշակ“, մի վհատիք անմիտ իմաստակների վայրահաչութիւններից, գործեցէք, ինչպէս որ սկսած սկզբից գործում էք մինչեւ ցայժմ, եւ եթէ ներկան չէ հասկանում, գոնէ ապագայ սերունդը երախտապարտ սրտով կը ճանաչէ ձեզ իբրեւ պաշտպան ազգի եւ հայրենիքի:

Հայ—լուսաւորչական

ԸՆՏԵՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՆԵՐՔԻՆ ՎԻՃԱԿՆ

Հանդիսիս խմբագրութիւնն առաջին օրէն իր ուշադրութեան առարկայ ըրած է մեր ազգային ներքին վիճակը, կատարեալ պէս համոզուած լինելով թէ նորա բարւոքումն անհրաժեշտ է, ըստ որում՝ ինչպէս որ առևտրական ընկերութիւն մ՝առանց լաւ պայմաններու և պայմանադիր կողմերն առանց զայնս ճշդիւ և հաւատարմութեամբ գործադրելու չը կրնար իր նպատակին հասնել, այն է, շահիլ և օր ըստ օրէ զարգանալ և առաջդիմել, այսպէս ալ մեր ազգն իբրև ընկերութիւն ենթադրելով՝ չը կրնար իր ազգային շահուցն ու իրաւանցն հսկել և հետևապէս զարգանալ և յառաջդիմել, եթէ իւր ներքին վիճակը բարւոքելու մասին անտարբեր գտնուի:

Երբ, քանի որ ազգ մը կենդանի է, կապրի և իր լեզուն, պատմութիւնը, գրականութիւնը, միտումներն ու բաղձանքներն ունի, բնական է որ իր ուրոյն շահերն և իրաւունքներն ալ ունի:

Մեր ազգն ալ ունի իւր շահերն ու իրաւունքներն, որոնց անվթար պահպանութիւնն հարկաւ իր ներքին վիճակէն կախում ունի:

Հայ ազգն այժմ չունի թէև քաղաքական անկախութիւն, ունի սակայն ներքին անկախութիւն, զոր վայելած է և կը վայելէ դարերէ ի վեր. վասն զի ունի իր անկախ եկեղեցին, որ քրիստոնեայ ազատ եկեղեցին է, որոյ շնորհիւ Հայը կրցած է պահպանել իւր ազգայնութիւնն իր քաղաքական անկախութենէն ետև, որովհետև Հայաստանեայց եկեղեցին անկորուստ պահպանեց Հայ լեզուն, որ ամբողջովին կը պարունակէ իր մէջ մեր ազգային կեանքը, պատմութիւնը, սովորութիւններն և ամենայն ինչ՝ որ Հայունն է և Հայուն կը վերաբերի:

Պատմական անժխտելի իրողութիւններ են ասոնք, զորս հերքելն անկարելի է, ինչպէս անկարելի է հերքել նաև այն ազատ դրութիւնն, որ կապած է Ազգն իր Եկեղեցւոյն հետ ոչ իբրև հպատակ՝ այլ իբրև տէր:

Հայս կէտն ապացուցանելու հարկ չը կայ, որովհետև պատմութիւնը նուիրագործած է զայս, ըստ որում Հայաստանեայց Եկեղեցին Սահմանադրական Եկեղեցի է և Կաթողիկոսն ալ նորա աւանդապահն է, որ բացարձակ կամք չունի երբէք:

Մեր ազգային եկեղեցւոյ բացարձակ տէրը միայն Ազգն է:

Ուստի Ազգը իրաւունք ունի իր ընտրած կաթողիկոսէն միշտ համար պահանջելու և գիտնալու թէ մինչև հիմա ի՞նչ ըրած է, ի՞նչ կընէ և ի՞նչ պիտի ընէ:

Հայս բանն այնքան հարկաւոր է, զոր չը կատարելն ազգային շահուց և իրաւանց դէմ պարզապէս մեղանչել կենթադրէ, որովհետև Էջմիածնայ արդի վիճակն և Ս. Կաթողիկոսին այժմու դիրքն ու կացութիւնը մեծ կարևորութիւն ունի գիտնալ, ուղղել և Ազգային ոգւոյ յարմարցնել, որ շատ հարկաւոր է:

Հաւասիկ ուշադրութեան արժանի ներքին խնդիր մը, զոր միայն «Մանզումէ» չը հասկանար կամ չուզեր հասկնալ, որովհետև իր շահերը դժբաղդաբար խիստ տարբեր են մեր ազգային բուն շահերէն, ըստ որում երբ կը կորսնցնէ մարդ իր պաշարիւնութիւնն՝ ա՛լ խօսողն ինք չէ, այլ կիրքը:

Ուր կիրքը կը խօսի, հոն բանավարութիւնը գործ չունի, հետևաբար այսպիսի պարագայի մէջ վիճաբանութիւնն անօգուտ է:

Գոհ ենք որ Ս. Փափազեան էֆէնտի Ազգային Ժողովոյ վերջնթեր նստին մատոյց այն կարևոր առաջարկութիւնն, որով փափաք կը յայտնէր Ս. Կաթողիկոսին չորեքտասնամեայ պաշտօնավարութեան հաշիւը խնդրել, նորա դիրքն ու կացութիւնն հասկանալ և փոխադարձաբար ազգային ընդհանուր բաղձանքները նմա ներկայացնել:

Ըստ աւելորդ է բացատրել թէ Թիւրքահայը, Պարսկահայը, Հնդկահայն և Ռուսահայն հաւասարապէս կը փափաքի այս բանիս, որովհետև գանգատանաց և դժգոհութեան ձայներն ամենուրեք ընդհանրացած են և ահա համարառութիւնը միայն կրնայ անախորժ տպաւորութեանց հետքը ջնջել:

Ապաքէն յուսալի է թէ Ազգային Ժողովն յիշեալ ամենակարևոր խնդիրը խորին ուշադրութեան առնու, յարգելով և պահելով միշտ ազատ վիճաբանութիւնն, որ երեսփոխանական ժողովոյ հոգին է:

(Լոյս)

ԱԼԲԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Սկուտարիից „Polit Corresp“ լրագրին գրում են հոկտեմբերի 17-ից: Մի քանի ժամանակ է ինչ մեծ մտկիթի բաղի մէջ ալբանական ժողովրդական ժողովներ են լինում, որոնց ժամանակ մասամբ ինքը Ռիզա-փաշա, մասամբ Օսման-փաշա և Խօջա-փաշա և նրա բարեկամները աշխատում են հանգստացնել ալբանցիներին: Երեկ դարձեալ մի ժողով կար, որի ժամանակ Խօջա-փաշա աշխատում էր ցոյց տալ, որ ինքը արժանի է սուլթանի հաւատարմութեանը: Նա աշխատում էր համոզել իր լսողներին, որ անհրաժեշտ է Դուլցինիոն խաղաղ ճանապարհով յանձնել Ճերնոգորիային: Թիւրքաց կայսերութիւնը, ասաց նա, թշուառ դրութեան մէջ է գտնվում: Ռ. Դուռը մի մեծ պատերազմ սկսելու համար ոչ դրամական միջոցներ ունի և ոչ դաշնակիցներ: Նա սարսափած կը լինէր պատերազմել ոչ թէ միայն Ճերնոգորիայի հետ, այլ բոլոր պետութիւնների հետ, որոնք հակառակ են նրան: Խաղաղութիւնը պահպանելով, սուլթանը իր ժողովրդի շահերի համեմատ կը վարվի: Ալբանցիների ընդդիմադրութիւնը անօգուտ կը լինի և մի և նոյն ժամանակ վտանգաւոր պետութեան համար, որի համար խաղաղութիւնը անհրաժեշտ է: Խօջա-փաշա միշտ հաւատարմութեամբ է ծառայել պետութեանը և ժողովրդին և եթէ այժմ նա խորհուրդ է տալիս զիջումներ անել, դրա պատճառը Թիւրքիայի և Թիւրք ժողովրդի բարօրութիւնն է: Նրա ճառը իր լսողների վրա միատեսակ տպաւորութիւն չը գործեց: Մի քանիսը խոնարհվում էին իրանց վիճակի առաջ հառաչելով և արտասուքներ թափելով, իսկ միւսները ընդդիմադրում էին և անբաւականութիւն էին ցոյց տալիս: Մի քանի ձայներ յանդիմանում էին կառավարութեանը: „Թող Ռ. Դուռը չը խառնվի մեր գործերի մէջ, ասում էին նրանք, եթէ նա մեզ համար ոչինչ չէ կարող անել, թող չէզոք մնայ: Մենք ինքնապաշտպանութեան իրաւունք ենք խնդրում, մենք բաւական միջոցներ ունենք մեր գործը շարունակելու համար: Եթէ այդ մեզ կորուստ կը պատճառի, այնուամենայնիւ մենք ոչինչ չենք կորցնի, որովհետև այժմ էլ մեզ աղքատութիւն են խոստանում: Խօջա-փաշա նորից սկսեց համոզել ներկայ եղողներին հնազանդվել անփախչելի իրողութեանը: Ժողովը ցրվեցաւ լռութեամբ և տխուր տրամադրված: Դուլցինիօ մէջ այդ քաղաքը պաշտպանելու համար գտնված ալբանցիների ոգևորութիւնը անցնում է: Մի կողմից նրանք յուսահատված են, որովհետև ալբանական նշանաւոր առաջնորդները մի օրվայ մէջ, միաժամանակ վախճանվեցան, միւս կողմից Ռ. Դրան ընթացքը կարում է նրանց յոյսը Դուլցինիօն պահպանելու վերաբերութեամբ: Հաստատ աղբիւրներից հաղորդում են, որ ալբանցիները հարիւրներով թողին իրանց բռնած դիրքերը և յուսահատված վերադարձան իրանց լեռնային նախկին բնակարանները: Այստեղի ալբանական գործող մասնաժողովը գրեթէ բոլորովին արձակված է: Ալբանցիները դրամական միջոցներ չունեն, սուլթանը այլ ևս նրանց ոչինչ չէ ուղարկում: Ռիզա-փաշայի ազդեցութիւնը հետզհետէ մեծանում է: Դուլցինիօի մէջ մի կողմից պակասում է ալբանցիների թիւը, իսկ միւս կողմից աւելանում է թիւրք կանոնաւոր զօրքերի թիւը: Կարելի է դուշակել, որ Դուլցինիօի հարցը բարեյաջող վախճան կունենայ: Այժմ ամեն բան կախված է այն դաշնագրութենից, որ կը կապէ Ռիզա-փաշա Ճերնոգորիական կառավարութեան հետ: Իսկապէս գործը առանց դժուարութիւնների չի վերջանայ: Թիւրքաց դիպլոմատիայի յատկանիշ կողմն է գիջումները քայլ առ քայլ անել:

ԲՕԼԳԱՐԻԱ

Ռուշչուկից „Polit. Corresp.“ լրագրին գրում են հոկտեմբերի 23-ից: Իշխան Ալէքսանդր յայտնեց, որ անհիմն են այն բոլոր լուրերը, որոնք հաղորդում են, իբր թէ Բոլգարիան ձգտում է միացնել իր հետ Արևելեան-Ռումելիան: Նրա կառավարութիւնը, ինչպէս մինչև այժմ, նոյնպէս էլ այսուհետև կաշխատի հեռու լինել պատերազմական դիտաւորութիւններից և իր բոլոր ուշադրութիւնը կը դարձնի ներքին գործերի վրա: Նրա կառավարութեան նպատակն է երկրի մէջ օրինաւոր կարգ ու կանոն մտցնել և բարելաւել հասարակական կեանքի բոլոր պայմանները: Նա մեծ նշանակութիւն է տալիս իր ժողովրդի բարոյական կողմերի ազնուացնելուն և ցանկանում է բարելաւել ողորմելի թիւրքերի դրութիւնը, որոնց իշխանը սիրեց այն ժամանակից, երբ ծանօթացաւ նրանց գեղեցիկ յատկութիւնների հետ: Իշխանի կարծիքով Արևելեան-Ռումելիայի միանալը Բոլգարիայի հետ ժամանակի խնդիր է: Այդ գործը ժամանակով կատարվելու է ինքն ըստ ինքեան, առանց իշխանի միջամտութեան: Նոյն կարծիքի է և զինուորական մինիստր գեներալ Էրնրօտ: Այդ պատճառով ոչ ռուսաց և ոչ բոլգարական կառավարութիւնները մտադիր չեն շտապեցնել անցքերի ընթացքը արհեստական միջոցներով: Ֆրանսիացիները, նկատում է գեներալը, տաս տարի շարունակ իրանց զօրքերի օգնութեամբ իտալացիներին հեռու էին պահում Հռոմից, բայց վերջը այնու ամենայնիւ յաւիտենական քաղաքը իտալացիների մայրաքաղաքը դարձաւ: Ի հարկէ Բոլգարիան միշտ հանգիստ չի լինի: Երբեմն երբեմն գաղանի յարձակմունքներ կը պատահեն Ռումելիայի վրա, բայց այդ յարձակմունքները չեն պաշտպանվի ոչ Սոֆիայի եւ ոչ Պետերբուրգի մէջ: Գենեռալ Էրնրօտ 45 տարեկան լաւ կրթված և համակրական անձնաւորութիւն է: Նա զօրքերին շատ լաւ կազմակերպում է և մի և նոյն ժամանակ բաւականանում է փոքր միջոցներով: Նրա խնայողութիւնը մեծ օգուտներ տուեց բոլգարական բիւդժեին: Բոլգարիան կարող է պարծենալ իր զինուորական մինիստրով:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳՐԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 նոյեմբերի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 50 կ., երկրորդ 92 ր. 12 կ., երրորդ 93 ր. 25 կ., չորրորդ 92 ր. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 218 ր., երկրորդ 217 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը 90 ր. 50 կ., երկրորդ 90 ր. 50 կ., երրորդ 90 ր. 35 կ., ոսկի 8 ր. 12 կ: Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 24½ պէնս, ռուսաց 100 ռուբլ Համբուրգի վրա արժէ 200 մարկ 50 պֆ., Փարիզի վրա 256 ֆր.:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 նոյեմբերի: Այսօր առաւօտեան 8 ժամին ամրոցի մէջ կատարվեցաւ Կվեսկովսկի և Պրեսնիկով պետական յանցաւորների մահուան պատիժը: Դիակները կէս ժամ մնացին կախաղանի վրա:

ԹԷՀՐԱՆ, 3 նոյեմբերի: Սուլթանի մօտ կանգնած քիւրդերը հնազանդվեցին: Քիւրդերի առաջնորդ Համզա-աղան բռնվեցաւ Ուրուզայի մօտ: Թայմուր-փաշա գրաւեց շէյխ Իբադուլլահի դիրքը Ուրուզայի մօտ և դրանից յետոյ շէյխը յետ է քաշվում 15 մղոն տարածութեան վրա:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 նոյեմբերի: Կառավարչական հաղորդութիւն. ռուսաց շատ լրագիրների մէջ արտասահմանեան լրագիրներից քաղուած լուրեր տպվեցան Վիէննայի ռուսաց դեսպանի և պապական նունցիոյի մէջ եղած բանակցութիւնների մասին: Այդ լուրերից բոլորն էլ, որոնք վերաբերում են քննվող առարկաներին, անհիմն են: Յիշեալ բանակցութիւնները շարունակվում էին մի քանի ամիսներ և մինչև Եպիսկոպոսների հեռանալը Վիէննայից վերջացան սկզբնական համաձայնութեամբ, որ վերաբերում է բացառապէս կաթոլիկական մեր թեմերի եկեղեցական կազմակերպութեանը:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ОБЪ ИЗДАНІИ

ВЪ ТИФЛИСѢ

ХУДОЖЕСТВЕННО-ЮМОРИСТИЧЕСКАГО ЖУРНАЛА

„ФАЛАНГА“

«ФАЛАНГА» будетъ выходить еженедѣльно по воскресеньямъ. Первый нумеръ выйдетъ въ среднихъ числахъ ноября мѣсяца текущаго года. Нумера нынѣшняго года предназначаются исключительно для розничной продажи, которая будетъ организована въ Тифлисѣ и въ прочихъ городахъ Имперіи. По подпискѣ-же журналъ будетъ доставляться съ января мѣсяца будущаго 1881 года.

УСЛОВІЯ ПОДПИСКИ:

Съ доставкою на домъ.

На 1 годъ..... 8 р. — к.
„ 6 мѣсяцевъ..... 4 р. 50 к.
„ 3 мѣсяца..... 2 р. 50 к.

Съ разсылкою по Имперіи.

На 1 годъ..... 8 р. 50 к.
„ 6 мѣсяцевъ..... 5 р. — к.
„ 3 мѣсяца..... 2 р. 75 к.

Подписка и объявленія принимаются въ конторѣ редакціи, на Эриванской площади, въ домѣ Харазова, № 3.

Контора открыта ежедневно отъ 9 до 2 и отъ 5 до 7 часовъ вечера.

ОТЪ РЕДАКЦІИ „ФАЛАНГА“.

Статьи, стихотворенія и корреспонденціи, предназначаемыя для напечатанія въ «Фалангѣ», должны быть за подписью автора и съ адресомъ его, иначе печатанію они подлежать не будутъ.

Статьи безъ обозначенія условій гонорара будутъ считаться редакціей безплатными.

Редакція оставляетъ за собою право сокращать и измѣнять присланныя рукописи по своему усмотрѣнію.

Статьи, признанныя редакціей неудобными къ печати авторамъ не возвращаются.

Для объясненій съ редакторомъ редакція открыта по понедѣльникамъ, средамъ и пятницамъ, отъ 12 до 3 часовъ по полудни. Адресъ: Тифлисъ, Эриванская пл., домъ № 3.

Въ трудахъ редакціи непосредственное участіе примутъ **Н. В. Симборскій и Горесмѣховъ** (Это не я). Изъ числа лицъ, изъявившихъ согласіе быть сотрудниками «Фаланги», назовемъ пока **Д. Д. Минаева, А. И. Пальма, Н. А. Плещеева, К. А. Бебутова, И. Ф. Тхоржевскаго** (*Иванъ да Марья*), **«Наслѣдственнаго поэта», Ак. Церетели.** Каррикатуры будутъ исполняться художникомъ **Петерсономъ** (псевдонимъ).

Редакторъ-издатель **Ив. Питоевъ.**

3—10

ОБЪ ИЗДАНІИ

въ 1881 году въ г. Тифлисѣ еженедѣльнаго русскаго юридическаго журнала

„СУДЕБНЫЕ ПОРЯДКИ“

Журналъ „Судебные Порядки“ будетъ выходить съ января 1881 года по воскресеньямъ, въ объемѣ не менѣе двухъ листовъ небольшого формата, подъ редакціею присяжнаго повѣреннаго округа Тифлисской судебной палаты Александра Ивановича Карабекова, по слѣдующей программѣ:

ПРОГРАММА

еженедѣльнаго юридическаго журнала „Судебные Порядки“

1) Передовыя статьи, заключающія въ себѣ общіе взгляды на состояніе правосудія въ судахъ гражданскихъ и положительнаго законодательства.

2) Судебные процессы, имѣющіе общественный интересъ.

3) Юридическія замѣтки и изслѣдованія, имѣющія предметъ обсужденіе общихъ началъ права, отдѣльныхъ законоположеній, мѣстныхъ обычаевъ, судебныхъ рѣшеній, опредѣленій и т. п.

4) Юридическія извѣстія, заключающія въ себѣ свѣдѣнія о явленіяхъ общественной жизни, имѣющихъ юридическій интересъ.

5) Библіографическія извѣстія, заключающія въ себѣ свѣдѣнія о вновь выходящихъ юридическихъ сочиненіяхъ.

6) Офиціальныя извѣстія, содержащія въ себѣ свѣдѣнія о новыхъ законоположеніяхъ, распоряженіяхъ правительства, движенія по службѣ, судебные указатели и резолюція по дѣламъ, назначеннымъ къ слушанію въ Тифлисскомъ окружномъ судѣ и Тифлисской судебной палатѣ.

7) Фельетонъ: а) полемическія статьи, не имѣющія характера передовыхъ статей, и б) отдѣльныя мелкія статьи юридическаго характера, не вошедшія въ составъ предидущихъ отдѣловъ.

8) Объявленія.

ПОДПИСНАЯ ЦѢНА: на годъ съ доставкою въ Тифлисѣ и пересылкою въ другіе города Россіи **семь** рублей, на полгода, для подписчиковъ г. Тифлиса **четыре** рубля, для иногородныхъ **четыре рубля пятьдесять коп.**, по почтовому союзу—на годъ **десять** руб.; отдѣльные нумера по **двадцати** коп.

Подписка принимается: въ Тифлисѣ: до 1 декабря сего года въ квартирѣ редактора, на Коджорской улицѣ, домъ № 8, а съ 1 декабря въ помѣщеніи редакціи —въ пассажѣ каравансарая Тамамшевыхъ, на Эриванской площади, въ г. Елисаветполѣ—уполномоченнымъ при управленіи государственными имуществами Р. И. Карабеговымъ. въ г. Кутаисѣ—присяжнымъ повѣреннымъ М. А. Киходзе, въ г. Эривани—присяжнымъ повѣреннымъ В. И. Егіазаровымъ.

Редакторъ-издатель **А. КАРАБЕГОВЪ.**

(10) 5.

ՀՐԱՒԷՐ ՄՕՍԿՎԱՅԻ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ *կայսերական ընկերութեան շերամապահութեան մասնաժողովից: Խարձրագոյն հաստատված կանոնադրութեան հիման վրա Մոսկվայի մէջ 1881 թուականի մայիսի 15-ին կը լինի համայն ռուսական արդիւնաբերական-արհեստական հանդէս: Այդ հանդէսի գիւղատնտեսական բաժնի մէջ առանձին տեղ կունենան շերամապահութեան վերաբերեալ առարկաները: Շերամապահութեան էկսպօնենտներին հրաւիրելը յանձնված է Մոսկվայի շերամապահական Մասնաժողովին, որը նրանց և մասնաժողովի անդամների մէջ համաձայնութիւն կայացնելու համար առանձին յանձնաժողով նշանակեց:*

Այս հանգամանքը 'ի նկատի ունենալով 1881 թուականի հանդէսի շերամապահական բաժինը կազմող մասնաժողովը դիմում է բոլոր շերամապահներին և Մասնաժողովի անդամներին, խնդրելով մասնակցել գործին և հասցնել մայրենի արդիւնաբերութեան շերամապահութեան վերաբերեալ առարկաներ:

Պ.պ. էկսպօնենտները եւ մասնաժողովի անդամները, որոնք ցանկանում են ներկայացնել հանդիսին շերամապահութեան վերաբերեալ առարկաներ, թող բարեհաճեն այդ մասին վաղօրօք յայտնել մինչև դեկտեմբերի 1-ը 1880 թուականի, հասցնելով իրանց յայտարարութիւնները Մոսկվա, Պոլիտեխնիկական մուզէյ, շերամապահական մասնաժողովի քարտուղար Վ. Լ. Դմ. Լեվինսկու անունով: Իսկ առարկաների ուղարկելը կը սկսվի 1881 թուականի մարտի 1-ին եւ կը շարունակվի մինչև ապրիլի 15-ը:

Ուղարկված յայտարարութիւնների մէջ էկսպօնենտները պէտք է նշանակեն. 1) ուղարկված առարկայի անունը, 2) քանակութիւնը, թիւը, ծանրութիւնը կամ չափը, 3) հարկաւոր տարածութիւնը հանդիսի մէջ քառակուսի արշինների յատակի կամ պատի վրա եւ 4) էկսպօնենտի ստորագրութիւնը եւ մանրամասն հասցէն: 1881 թուականի համայն ռուսական հանդիսի շերամահական բաժնի մանրաման պրօգրամը ուղարկվում է բոլոր ցանկացողներին անվարձ:

2—4 (3)

ՄԻ ՕՐԻՈՐԴ, *որ ուսում է ստացել Փարիզում և Լօնդօնում, տալիս է ֆրանսերէն և անգլիերէն լեզուների դասեր: Հասցէն Սապէրնայա փողոց, № 37:*

6—6

ՀԱՇԻՎՊՀՈՒԹԻՒՆ *խմացող մի երիտասարդ պաշտօն է փնտռում գրասենեակների, կամ բանկերի մէջ, համաձայն է նոյնպէս Թիֆլիսից դուրս գնալ: Հարցնել Թիֆլիսի կալուածական բանկի մէջ Խ. Գ. Խաչատուրեանից:*

1—3 (2)

ՌԵՐԼԻՆԻ ՆՈՐԱՁԵՒ ԲԱԶՄԸ *է ներկայ տարվայ հոկտեմբերի 15-ից, Սոլոլակի, Գանձակայա փողոց, տ. Գանձարովայի խանութից վերև, կնեազ Ռեբութովի տանը №№ 2 և 3: Այդտեղ կարելի է ստանալ մեծ քանակութեամբ կանանց և երեխաների նորաձև հագուստներ, ինչպէս բատօնդներ, դօլմաններ, զանազան տեսակի պալտօներ և մեծ քանակութեամբ կանանց և երեխաների նորաձև գլխարկներ և նրանց պատկանելիք: Նոյն տեղը կարելի է գտնել զանազան նկարների դրապներ, կաստօր և թաւիշ (մախմուր): Ընդունվում են նոյնպէս ամեն տեսակ պատուէրներ: Գները ամենաչափաւորեն:*

6—10

ՎԱՐԺՈՒՀԻ ՐՕԴՈՒՉԵՎԻՉ ԴԸՍԻՐ *է փնտռում և պատրաստում է երեխաներին բոլոր ուսումնարանների համար: Հասցէն կարելի է իմանալ Էնգիմնազիանոյի գրավաճառանոցի մէջ:*

4—4

Մինչև առաջիկայ 1881 թիւ յունվար ամիսը ՇՈՒՇԻ քաղաքում կը տպագրվի և առանձին գրքով լոյս կը տեսնի ԲԱՖԻԻ «ՏԵՆԹԸ» անունով վիպասանութիւնը: Տպագրութիւնը կը լինի գեղեցիկ և մաքուր թղթի վրա: Իւրաքանչիւր գրքի գինը կանխապէս բաժանորդագրողների համար նշանակվում է 1 ռուբլի: Իսկ տպագրութիւնից յետոյ գնողների համար գինը կը բարձրանայ: Պ. պ. բաժանորդները թող բարեհաճեն իրանց վճարը ուղարկել այս հասցէով. Шуша. АВЕЛЬЮ ДАВИДОВИЧУ АПРЕСЯНЦУ. Въ конторѣ АРУНЯНЦА.

Հրատարակիչ Ա.ԲԵԼ. Դ. ԱՊՐԻՍԵԱՆՑ

10—10

ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ Է

Օ Ր Ա Ց Ո Ց

1881 Թ.

Ո. Յ. Տէր-Աբրամեանցի, գինն է 15 կոպէկով:

Վաճառվում է Զաքարեա Գրիգորեանցի «Կովկասեան գրավաճառանոցում Տփխիս:

10—20

Ֆ. Կ. ՉԱՄԼԻՆՍԿՈՒ ԴԵՂԱՏԱՆ ԿԻՑ ՄԻԽԱՅԼՈՎՍԿԱՑԱ ՓՈՂՈՑ Տ. ԿՕՏՐԻՆԻ: *Ամենայն օրը* ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ *առաւօտեան* 11 *ժամից մինչև երեկոյեան* 5 *ժամը ներքին, երեխայական, ջղային, վեներական և կաշու հիւանդութիւններ ունեցող* ՀԻՒԱՆԴՆԵՐԸ:

6—6

Ռրիլեանի, ոսկու և արծաթի իրեղէնների **ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆ ԽԱՆՈՒԹԸ և ԱՐՀԵՍՏԱՆՈՑԸ** *Կաթոլիչեսկայա փողոցի անկիւնից Երմանսկի բազարի վրա տեղափոխված է Դըվօրցօվայա փողոցը* **ԱՐԾՐՈՒՆՈՒ** *տանը: Իրեղէններ գնելու, պատուէրներ տալու և իրեղէնները նորոգելու համար խնդրում եմ դիմել իմ խանութը: Նոյն տեղը ստացված է մեծ քանակութեամբ ոսկէ, արծաթէ և բրիլեանտի իրեղէններ և և ժամացոյցներ:*

Մ. ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

3—3 (2)

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

ՎԱՐՁՈՎ ՏՐՎՈՒՄ ԵՆ

ԽԱՆՈՒԹՆԵՐ

5—10

Անանկացած ՁԱՆՁՈՒՂԱՁՈՎ *եղբայրների գործերի համար նշանակված* ՄՐՑՈՂԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ *կարգադրութեամբ, ջանջուղաձոլների մեծ խանութի մէջ, Գալոֆինսկայա հրապարակի վրա* ՄԻՐԻՄԱՆՈՎԻ ՏԱՆԸ *ապրանքներ* ԿԸ ԾԱԽԵՆ, *նոյնպէս չուգունի* ՎԱՐԱՐԱՆՆԵՐ *հատով և մեծ քանակութեամբ ամենայն օր առաւօտեան* 10 *ժամից մինչև* 2 *և երեկոյեան* 5—8 *ժամը:*

Խնամակալ պ. Լեբեդինսկի:

Дозволено цензурою. Тифлисъ, 5 Ноября 1880 года.

Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.